բանակցութիւնները կը հասցնեն ցանկալի հետեւանքներին։ Հանրապետական լրագրները բաւականութիւն են յայտնում, որ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացել առևտրական դաշնագրի և եգիպտական գործերի վերաբերութեամբ։ „République Française“ լրագիրը նկատում է, թէ Եւրոպայի երկու առաջադէմ ժողովուրդները, ֆրանսիացիք և անգլիացիք միջազգային քաղաքականութեան վերաբերութեամբ պէտք է ձեռք ձեռքի տուած ընթանան և Նրանք եգիպտական գործերները վերջացնելու համար բոլորովին պէտք չունեն դիմել թիւրքերի օգնութեանը։

Նախագահ Գրեվի, մինիստրութենից հեռացիր սանալով պատգամաւորների ժողովի բացման շտապեցնելու մասին, պատասխանեց, որ նա այդ միջոցի դէմ ոչինչ չունի։ Սեպտեմբերի 20-ին կայացաւ մինիստրների խորհուրդ Ֆունիսի և Ալժիրիայի մէջ եղած պատերազմների ծախսերը ծածկելու հարցը քննելու համար։ Հաւատացնում են, որ ֆինանսների մինիստր հրաժարվում այսուհետև դրամ տալ առանց պատգամաւորների ժողովի գիտութեան։ Նա յայտնել է, որ կը հրաժարվի իր պաշտօնից, եթէ ազգային ժողովները անյապաղ չեն գումարվի։

Ֆունիսի բէյ բողոքեց իր մայրաքաղաքը ֆրանսիական զօրքերով գրաւելու դէմ։ Ֆրանսիացիները պատրաստվում են արշաւել Կէյրաուանի վրա։ Ապստամբված արաբների մէջ շատ թիղանաթաձիգներ կան, որոնք փախել են բէյի զօրքից։ Փարիզի և գաւառների ժողովրդական ուսուցիչները և վարժուհիները ստորագրութեամբ մի ճառ տուին ի պատիւ Պոլ Բէյրի, որ ժողովրդական լուսաւորութեան ապագայ մինիստր է համարվում։ Ճաշի ժամանակ Բէր մի ճառ արտասանեց, որի մէջ ի միջի այլոց նկատեց, թէ անհրաժեշտ է վերականգնել Ֆրանսիայի նախկին սահմանները։

Ֆրանսիական բոլոր լրագրները համակրութեամբ վերաբերվեցան Գարֆիլդի յիշատակին, մատնացոյց լինելով այն բարեկամական յարաբերութիւնների վրա, որոնք տեղի պէտք է ունենան Ֆրանսիական և ամերիկական հանրապետութիւնների մէջ։ Նախագահ Գրեվիի ներկայացուցիչը և Ֆրանսիական բոլոր մինիստրները այցելեցին Միացեալ Նահանգների դեսպանին Փարիզում։

Փարիզի մէջ ամենքը զարմացած են, որ վերջին ժամանակներում չափազանց շատ զօրքեր են ուղարկվում հիւսիսային Աֆրիկա, մինչդեռ մի քանի օրվայ ընթացքում Ալժիրիայից և Ֆունիսից ոչինչ տեղեկութիւններ չեն ստացվում գործերի դրութեան մասին։ Սեպտեմբերի 20-ից հեռագրական հաղորդակցութիւնը Ալժիրիայի հետ ընդհատված է։ Այդ հանգամանքը աւելի էլ անհանգստացնում է հասարակութեանը այն պատճառով, որ յայտնի չէ արդեօք հաղորդակցութիւնն է ընդհատված, թէ կապավարութիւնը վատ տեղեկութիւններ է ստանում և նրանց ծածկում է։

Ֆրանսիական հանրապետական լրագրները զբաղված են սահմանադրութեան վերաքննութեան և սենատի փոփոխման հարցերով։ Այդ գործին չեն խանգարում ոչ աֆրիկական գործերը և ոչ Անգլիայի հետ կապվելի առևտրական դաշնագրի հոգսերը։ Սենատը մի քանի սխալներ գործեց։ Նա այնպէս չէր վարվում, ինչպէս ցանկանում էր պատգամաւորների նախկին ժողովի մեծամասնութիւնը, հետևապէս պէտք է ոչնչացնել այդ վերջին արդելքը, որ ստեղծված է 1875 թուականի սահմանադրութեամբ։ Սենատի կազմակերպութիւնը դեռ ևս կատարելապէս հանրապետական չէ։ Նրա մէջ բաւական շատ նշանաւոր պահպանողականներ կան։ Ուրեմն պէտք է ոչնչացնել յետադիմութեան այդ վերջին նեցուկը Ֆրանսիայի մէջ։ „République Française“ լրագիրը վերջին ժամանակներում անդադար այդպիսի քարոզներ է տպում։ Բացի հանրապետական լրագրներից արմատականներն էլ պահանջում են վերաքննել սահմանադրութեան այն յօդուածները, որոնք սենատին են վերաբերում։

1882 թուականին սենատի անդամների մի մասը պէտք է փոփոխվի։ Նոր ընտրութիւնների հետևանքը երևի ձեռնտու կը լինի հանրապետութեան համար։ Այդպիսով սենատի մեծամասնութիւնը ինքն ըստ ինքեան հանրապետական կը դառնայ։ Այժմեան հիմնարկութիւնների հաստատութեան համար հանրապետականները կարող էին մի տարի էլ սպասել, որպէս զի իրանց թշնամիների ձեռքը փոանգաւոր զէնք չը տան։ Բայց „République Française“ և նրա համախոհները ոչինչ նշանակութիւն չեն տալիս այդ հանգամանքին։

ԱՆԳԼԻԱ

—

Սեպտեմբերի 15-ին Դուբլինի մէջ կայացաւ կալուածական միութեան ժողովը, որին մասնակցում էին 1300 անդամներ։ Ժողովին նախագահում էր Պարնել։ Նա խրատութեամբ քննադատում էր կալուածական օրէնքը, ասելով, որ այդ օրէնքի նպատակն է ոչնչացնել կալուածական միութիւնը։— Նա իր նախագիծը ձևակերպեց, պահանջելով կատարելապէս ոչնչացնել կապավարձը։ Վերջը ժողովը վճիռ կայացրեց, որ հետևեալ պահանջներ է անում. դատապարտել ստիպողական օրէնքները, յայտնել, որ կալուածական օրէնքը չէ կարող երկիրը խաղաղացնել, մինչև չարձակվեն կարանտորված իրլանդացիները և մինչև Իրլանդիային կատարեալ ինքնավարութիւն չը շնորհվի։

Լօնդոնի մէջ կայացաւ ժողովրդական միութեան ժողովը, որին մասնակցում էին մօտ 1000 մարդ, գլխաւորապէս բանւորներ։ Ժողովը ամենաարմատական վճիռներ կայացրեց, ի միջի այլոց լօրդերի ժողովի ոչնչացնելու և հողերը ժողովրդին յանձնելու մասին։ Մեծ հաւանութեամբ ընդունվեցաւ օրիորդ Կրեգանի արտասանած ճառը, որով նա նկարագրեց իրլանդացի բանւորների դժբաղդ վիճակը։ Բոլոր խօսողները պահանջում էին, որ պարլամենտը ժողովրդի իսկական ներկայացուցիչը լինի և որ Անգլիան ազատվի արիստոկրատիայի և հոգևորականութեան ճնշումից, բայց միև նոյն ժամանակը ամենքը պնդում էին, որ նրանք օրինաւոր վերանորոգութիւններ են ցանկանում և ոչ թէ արիւնհեղ յեղափոխութիւն։

Իրլանդական ազգային խորհրդի նիստի ժամանակ Պարնել յայտնեց, թէ նա իրլանդական երկրագործների հետ խորհրդակցել է և նրանք պատրաստակամութիւն են յայտնել հնազանդվել իրլանդական միութեան կարգադրութիւններին։ Այնուհետև կարդացվեցան նոր հեռագիրներ միութեան ամերիկական բաժիններից, որոնք ամենքն էլ վիրջանում են հրաւէրով չը վճարել կալուածական տուրքերը։ Մի քանի հեռագիրների մէջ սպառնալիքներ են յայտնված այլ ևս դրամական օգնութիւն չտալ, եթէ իրլանդացիք հակառակ նրանց ցանկութեան վճարեն կալուածական տուրքերը։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Ի նկատի առնելով Վիէննայի լրագրների դատողութիւնները և հաղորդութիւնները, կարելի է մտածել, որ Աւստրօ-Ունգարիա ցանկանում է մտնել Ռուսաստանին։ Այդ անսպասելի ցանկութիւնը երևեցաւ կայսրների տեսութենից յետոյ Դանցիգի մէջ և երևի այդ անցքի ուղղակի հետևանքն է։ Աւստրօ-Ունգարիայի մէջ կայսրների տեսութենից յետոյ ոչ ոք չէր մտածում քաղաքականութեան այդպիսի փոփոխութեան մասին։ Ոչ ոք չէր մտածում այդ անսպասելի անցքի մասին, այնպէս որ աւստրիական կառավարութիւնը չը կարողացաւ գործ դնել հարկաւոր միջոցներ և նախապատրաստել հասարակական կարծիքը։ Աւստրիական պաշտօնական և կիսապաշտօնական լրագիրները առաջ այն փութքն էին յայտնում, թէ աւստրօ-գերմանական դաշնակցութիւնը կարող է Ռուսաստանի դէմ թշնամական ուղղութիւն ստանալ, այժմ նոյն լրագիրները յիշում են երեք կայսրների դաշնակցութիւնը և պնդում են, թէ աւստրիական և ռուսաց կառավարութիւնների համար անհրաժեշտ է հանգիստութեամբ գործել։ Այս գործը բաւական դժուար էր, բայց աւստրիական խմբագիրները կատարեցին նրան իրանց սովորական ճարպիկութեամբ։ Աւստրիական մամուլը այժմ լուր է տարածում, որ շուտով ռուսաց և աւստրիական կայսրները կը տեսնվեն և որ այդ տեսութիւնը վերջ կը դնի այն անբաւականութիւններին, որոնք տեղի են ունեցել Ռուսաստանի և Աւստրօ-Ունգարիայի մէջ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 11 սեպտեմբերի

Շատ ուրախալի է տեսնել Մշակի մէջ Journal d'Oriant-ի գործը յաջողութեան մէջ։ բաժանորդ գրվողների մէջ շատերին հաճութեամբ իմ բարեկամներից եմ տեսնում։ Թող օրինվի նոցա բարի եռանդը, բայց երբ նոքա այդչափ ազնիւ են և հայրենասէր, թող նոքա չը զլանան ևս իւրաքանչիւրը իր կարողացածին չափ օգնել մեր նորահաստատ օրգանին նոյնպէս և լրանց յօդուածներով։ այս մասին մանաւանդ պիտի խնդրած մեր ընդհանուր բարեկամ Լևոն Տիգրանեանցից, որը լինելով Հայաստանի սահմաններից մօտ, կարող է շատ բաներ իմանալ տաճկայարի գրութիւնից և գերմաներէն լեզուավ հաղորդել մեր օրգանին։ Մի մոռանաք, որ Կ. Պոլսի վրա

լալիս էին, երբ նա կարդում էր Ալէքսանոսի տանջանքները։ Երբ ես հարցնում էի, ինչի ուրիշ Նոր նոր գրքեր չեն կարդում, նոքա միշտ մի և նոյն պատասխանն էին տալիս, որ չունեն և չեն կը ցանկանային ունենալ, եթէ մէկը ուզարկէր նոցա «թազա լաւ լաւ գրքերից մի քանի հատ»։ Ես ի հարկէ ցոյց էի տալիս ամեն տեղ, թէ ինչ հեղինակութիւններ օգուտ է նոցա կարդալ և որտեղ կարելի է ձեռք բերել. այսպիսի ընտանեքներ չատ և չատ պատահեցին ինձ. միայն ամեն տեղ նոյն նահապետական գրքերը։

Ամառուայ մեծ մասը ես անցրի Նորգում, որ Երևանի թաղերից մէկն է։ Թող ներէ ինձ ընթերցողը բոլորովին չեղվել մի փոքր յօդուածիս բովանդակութիւնից և ասել երկու խօսք Նորգի մասին։ Նորգը, ինչպէս ասացի, Երևանի թաղերից մէկն է, քաղաքից 3 վերստ հեռու ընկած. վճարում է քաղաքացիութեան բոլոր հարկերը և մի և նոյն ժամանակ զուրկ է բոլորովին քաղաքացիութիւնից. ոչ ճանապարհ ունի, ոչ յարմարաւոր փողոցներ, ոչ լաստերներ, ոչ գիշերապահներ, վերջապէս ոչինչ չունի, որ Նորգեցին կարողանայ ասել. «այո, Երևանը ստանում է մեզնից հարկ և մի և նոյն ժամանակ ծախսում է մեր հասարակութեան պիտոյքների վրա», կարճ ասել՝ Նորգը Երևանի համար «խորթ» որդի է, որին փորթ» մայրը զրկում է բոլոր ամենանախնի հրաժեշտ բաներից։ Ահա այս Նորգումն էի ես, Այստեղ ամեն քայլափոխում պատահում էին ինձ մի և նոյն տեսարանները. բայց Նորգի ժողովուրդը աւելի հեռու է գնում. նա հիմնել է մի ընթերցարան, որ մեծ պատիւ է բերում իրեն և որի հաստատման թուականը չուտով կը ստացվի ս. Ն.ջմիածնից։ Երեկոները կամ ազատ ժամանակները հաւաքվում են այստեղ Նորգեցիք և կարդում են. բայց ցաւ է ասել, որ այստեղ ևս, ինչպէս առհասարակ, գրքեր շատ քիչ են և շատերը ստիպված են լրագրերով բաւականանալ։ Այս փաստերը ես բերեցի ցոյց տալու համար, որ ընթերցասիրութիւնը սկսել է մուտ գործել մեր ժողովրդի մէջ. այժմ աւելի քան երբ և իցէ հարկաւոր է ժողովրդի գիւրամարս գրքեր մատակարարել ամենաարժան գներով։ Այստեղ մեծ դեր կը խաղային պ. Մելիքզադէ—Թաղիեվի, այս մեր քանքարաւոր բանասեղծի մասը վերապանութիւնները, որոնք, ես հաւատացած եմ, մի տարում դուրս կը վազեցնէին բոլոր տեղից «Պղնձէ քաղաք»-ներ և սրա նման շատ ուրիշ անօգուտ գրքեր. միայն, կրկնում եմ, գրքերը պէտք է ամենամատչելի լինեն։ Շատ աննպատակ է մեզանում այժմ հրատարակել այնպիսի գժուարամարս գրքեր, որոնք ոչնչով ժողովրդի մէջ հետաքրքրութիւն չէին կարող շարժել։ Օրինակի համար. ում համար է թարգմանված «Դրէպերի» հեղինակութիւնների ա. մասը.—ո՞ գիտէ, գուցէ չուտով բ. ևս լոյս կը տեսնի—հայ ժողովրդի համար. թէ նրա ինտելլիգենցիայի համար. առաջին դէպքում գիրքը բոլորովին անսպառակ է. այս պարզ է, ինչպէս լոյս։ Իսկ երկրորդ դէպքում, բոլորովին աւելորդ, որովհետև ա. ինտելլիգենցիան «Դրէպեր» հասկանալու համար գիտէ անգլիերէն, ֆրանսիերէն, գերմաներէն, ամենաքիչը ռուսերէն, իսկ բ. ժողովրդի շահերը չը պէտք է զոհել ինտելլիգենցիայի շահերին, որովհետև այս վերջինը առանց այդ ևս բաւական տպաւորված է հետզհետէ զարգանալու համար։ Այստեղից բղխում է անհրաժեշտութիւնը մի մասնաժողովի, որի պարտքը կը լիներ հաւաքել յարմարաւոր գրքեր զանազան լեզուներով և առաջարկել թարգմանել այն թարգմանիչներին, որոնք, փառք Աստուծու, մեզանում շատ կան և որոնց շնորհիւ, թող ներվի ինձ ասել, մեր լեզուն զարձել է կատարեալ խասաղ գրքերը կը թարգմանվէին և յետ կուղարկվէին մասնաժողովին, որը կը տրրպարէր և ըստ կարողութեան կաշխատէր մի ուղղութիւն տալ թարգմանված գրքի լեզուին, ոճին։ Ես կարծում եմ, որ մեծ քարէք կը լինէր մեզ համար, եթէ մեր յարգելի բանասէրն պ. Բաքիխին կը ստանձնէր այդ մասնաժողովի մէջ նախագահութեան պաշտօնը և կաշխատէր իր անմման լեզուն մտցնել բոլոր թարգմանութիւնների մէջ, այս կը լիներ միակ դլխաւոր միջոցը, որ կազատէր մեր աշխարհաբառը Բաբելոնեան աշտարակաշինութիւն դառնալուց։ Ես կարծում եմ, որ պատուելի թարգմանիչները զանազան գրքերի ոչ թէ կը վիրաւորվեն այս իմ առաջարկութենից, այլ ընդհակառակը կը համակրեն, եթէ նրանք ճշմարիտ ցանկանում են մշակել մեր լեզուն, իսկ մը-չակել այն ճանապարհով, ինչպէս այժմ է ապլինում, սատիկ կասկածելի է... Ինքնուրոյն զբուռածների մէջ ամենամեծ տեղը կը տրվէր վերոյիշյած մեր քանասեղծի, վէպերին, և շատ յարմար կը լիներ, որ առաջին ժամանակները բացառապես տպարվէին հէնց այդ վէպերը, որոնք ցրված են «Մշակ»-ի զանազան համարների մէջ զանազան տարիների շարքում. հարցը հէնց նրանումն է, որ առաջին միջոցները որքան կարելի է շատ դիւրամարս վերապանութիւններ տալ ժողովրդին և գլխաւորապէս ներկայ կեանքից։

Այս հարցը այնքան նշանաւոր է մեր ժողովրդի յաջորդաբար ու կանոնաւոր զարգացման համար, որ, իմ կարծիքով, աւելորդ չէր լինի եթէ յարգելի խմբագրութիւնը բարձրացնէր «հայերիս մէջ վիպասանութիւններ տարածելու» հարցը և բազմակողմանի մշակէր նրան։

Մոսկվա Ա. Կ—եանց